

**Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր**  
**ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**  
**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ**  
**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**  
**N ՍՄ-ԲԸԱԿ-ԾՁԲ-14/04-1/1-1/3-1/4-1/6**

ք. Կապան

« 27 » հունիսի 2014թ.

ՀՀ Սյունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու» մի կողմից և «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ը ի դեմս տնօրեն Ս. Բաղայանի, որը գործում է «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Սյունիքի մարզի „Կապան համայնքի Բարաբաթում տանող ճանապարհի ասֆալտապատման,, „Ազարակ-մաքսատուն ճանապարհի կառուցման,, „Սիսիան համայնքի Վահան Խորենի ճանապարհի ասֆալտապատման,, „Մ2-Տաշտուն ճանապարհից Լիճք տանող ճանապարհի ասֆալտապատման,, շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ **Ծառայություն**)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական ընտրագիր գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական ընտրագիր գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում՝ մինչև 2014թ. դեկտեմբերի 25 ր:

**2.Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական ընտրագիր գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն:

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Սիակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն՝ պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական ընտրագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել **Ծառայության** մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել **Պատվիրատուին**:

2.4.4 Եթե շինարարական աշխատանքների երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա **Կատարողը** պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար **Պատվիրատուին** վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ **Պատվիրատուի** կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

### 3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 **Պայմանագրի** կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են **Պատվիրատուի** և **Կատարողի** միջև հանձնման ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

**Կատարողը Ծառայության** մատուցման ավարտից 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում **Պատվիրատուին** է հանձնում մատուցված **Ծառայության** մասին իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված **Ծառայությունը** համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և **Պատվիրատուն**՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) **Կատարողի** նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 **Պատվիրատուն** հանձնման ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 /երեք/ օրյա ժամկետում **Կատարողին** է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ **Ծառայությունը** չընդունելու պատճառաբանված մերժումը:

### 4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրով **Կատարողի** մատուցման ենթակա **Ծառայության**՝ ընդհանուր գինը կազմում է 530000.0 (հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է **Կատարողի** կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ընդ որում՝

- **„Կապան համայնքի Բարաբաթում տանող ճանապարհի ասֆալտապատման,,** աշխատանքների հեղինակային հսկողության մատուցման համար – 150.0 /մեկ հարյուր հիսուն/ հազար ՀՀ դրամի չափով.

- **„Ագարակ-մաքսատուն ճանապարհի կառուցման,,** աշխատանքների հեղինակային հսկողության մատուցման համար – 200.0 /երկու հարյուր/ հազար ՀՀ դրամի չափով.

- **„Սիսիան համայնքի Վահան խորենի ճանապարհի ասֆալտապատման,,** աշխատանքների հեղինակային հսկողության մատուցման համար – 100.0 /մեկ հարյուր/ հազար ՀՀ դրամի չափով.

- **„Մ2-Տաշտուն ճանապարհից Լիճք տանող ճանապարհի ասֆալտապատման,,** աշխատանքների հեղինակային հսկողության մատուցման համար – 80.0 /ութսուն/ հազար ՀՀ դրամի չափով:

**Ծառայության** մատուցման գինը կայուն է և **Կատարողն** իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ **Պատվիրատուն** նվազեցնելու այդ գինը:

4.2 **Պատվիրատուն** իրեն մատուցած **Ծառայության** դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները **Կատարողի** հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 րանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված **Ծառայության** դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25 ր:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 **Կատարողը** պատասխանատվություն է կրում **Ծառայության** մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին չհամապատասխանող **Ծառայություն** մատուցելու յուրաքանչյուր դեպքում **Կատարողից** գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված **Ծառայության** մատուցման ժամկետը խախտելու դեպքում **Կատարողից** յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված **Ծառայության** գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են **Ծառայություն** մատուցելու արդյունքում **Կատարողին** վճարման ենթակա գումարների հետ:

5.5 **Պատվիրատուի** կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում **Պատվիրատուի** նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը **Կողմերին** չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (Ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված **Համաձայնագրերով** պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, **Կատարողը** ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ **Կատարողին** հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին՝ որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո **Պատվիրատուն** իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, **Պատվիրատուն** չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով **Կատարողի** համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ **Կատարողը** պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով **Պատվիրատուի** կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ **Պատվիրատուի** ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն **Կողմերի** փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի

չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևոք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող **Աշխատանքի** ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե պետության կարիքների համար կնքվելիք պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորի երևք հարյուր հիսնապատիկը, ապա տվյալ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պայման է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ գնման ընթացակարգի արդյունքների հաստատումը:

Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է **„Պատվիրատուի,,** համաձայնությամբ:

2) **„Կատարողն,,** է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

**„Ծառայության,,** մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալու պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ **„Պատվիրատուի,,** մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն **Պայմանագրի** պատշաճ կատարման պայմաններում կողմերի (**Կատարող** և (կամ) **Պատվիրատու**) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում **Կատարողի** կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է **Կատարողը**:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձևոք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 4 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

### 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Պատվիրատու»

Սյունիքի մարզպետարան  
ք.Կապան Գ.Նժդեհի - 1  
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան  
Հ/Հ 900312000038  
ՀԿՀՀ 09415375

«Կատարող»

«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ  
ք. Երևան ԱՃառյան 54 բ  
«Զարգացման հայկական բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1810052093643312  
ՀԿՀՀ 00813453

Կ.Տ



Ս. Բաղայան

**Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր  
Գ Ն Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց  
Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ս Կ Ո Ղ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Մ Ա Ն**

**„Կապան համայնքի Բարաբաթում տանող ճանապարհիի ասֆալտապատման”  
աշխատանքների**

1	<b>Շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման բնութագիրը</b>	
	Աշխատանքների /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ հեղինակային հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում	
2	<b>Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը</b>	
	Ընդհանուր դրույթներ Հողային աշխատանքներ Բետոնյա վաքերի և մետաղական խողովակների տեղադրում Երթևեկելի մասի ասֆալտապատում	
3	<b>Տեխնիկական առաջադրանք</b>	
	Հսկողության իրականացում <b>Պատվիրատուի</b> կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն: Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին: Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նախագծային ու նորմատիվ այլ փաստաթղթերի պահանջներին համապատասխանության ապահովում: Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում	
4	<b>Ծառայությունների մատուցման ավարտում</b> --- շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ :	
5	<b>Ծառայության մատուցման ժամկետը</b>	
	Սկիզբը	Ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	30.09.2014թ.

**„Ագարակ-մաքսատուն ճանապարհի կառուցման”  
աշխատանքների**

1	<b>Շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման բնութագիրը</b>	
	Աշխատանքների /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ հեղինակային հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում	
2	<b>Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը</b>	
	Ընդհանուր դրույթներ	

	Կողմակների իրականացում
	Իջատեղերի և ճանապարհային հագուստի իրականացում
	Ճանապարհի կահավորում
3	<b>Տեխնիկական առաջադրանք</b>
	Հսկողության իրականացում <b>Պատվիրատուի</b> կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նախագծային ու նորմատիվ այլ փաստաթղթերի պահանջներին համապատասխանության ապահովում:
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում
4	<b>Ծառայությունների մատուցման ավարտում</b> --- շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ :
5	<b>Ծառայության մատուցման ժամկետը</b>
	Սկիզբը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից
	Ավարտը
	30.09.2014թ.

**„Սիսիան համայնքի Վահան Խորենի ճանապարհի ասֆալտապատման”**  
աշխատանքների

1	<b>Շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման բնութագիրը</b>
	Աշխատանքների /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ հեղինակային հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում
2	<b>Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը</b>
	Ընդհանուր դրույթներ
	Երթևեկելի մաս
	Մայթեր
3	<b>Տեխնիկական առաջադրանք</b>
	Հսկողության իրականացում <b>Պատվիրատուի</b> կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նախագծային ու նորմատիվ այլ փաստաթղթերի պահանջներին համապատասխանության ապահովում:
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում
4	<b>Ծառայությունների մատուցման ավարտում</b> --- շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ :
5	<b>Ծառայության մատուցման ժամկետը</b>
	Սկիզբը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից
	Ավարտը
	30.09.2014թ.

**„Մ2-Տաշտուն ճանապարհից Լիճք տանող ճանապարհի ասֆալտապատման”  
աշխատանքների**

1	<b>Շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման բնութագիրը</b>
	Աշխատանքների /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ հեղինակային հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում
2	<b>Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը</b>
	Ընդհանուր դրույթներ Երթևեկելի մասի իրականացում
3	<b>Տեխնիկական առաջադրանք</b>
	Հսկողության իրականացում <b>Պատվիրատուի</b> կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն: Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին: Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նախագծային ու նորմատիվ այլ փաստաթղթերի պահանջներին համապատասխանության ապահովում: Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում
4	<b>Ծառայությունների մատուցման ավարտում</b> --- շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ :
5	<b>Ծառայության մատուցման ժամկետը</b>
	Սկիզբը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից
	Ավարտը 30.09.2014թ.

**Պատվիրատու**

ՀՀ Սյունիքի մարզպետարան  
ք. Կապան Գ.Նժդեհի1  
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան  
Հ/Հ 900312000038  
ՀՎՀՀ 09415375

**Կապալառու**

«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ  
Երևան, Աճառյան 54 բ  
«Ջարգացման հայկական բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1810052093643312  
ՀՎՀՀ 00813453

Կ.Տ.

Ուղարկյալ  
Ստացված  


Ս. Բաղայան  


**Կ Ջ Մ Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց Ց**  
**Հ Ա Մ Ի Ն Ա Ն Կ Ն Ե Ր Կ Ն Ե Ր Կ Ն Ե Ր**  
**Ծ Ր Ա Յ ՈՒ Յ Ց Ի Դ Ր Ա Յ Ա Ն Ա Ց Մ Ա Ն**

Աշխատանքի անվանումը	Աշխատանքի պայմանագրային գինը	Ֆինանսառախարկման գումարը ՀՀ պետական բյուջեից՝ ըստ 2014թ ամիսների											Ընդամենը				
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր			
„Կասպան հանլոյնքի Բարաբաթում տալուով ճանապարհի անֆալտապատում,,	150.0																150.0
„Եգարակ-մաքսատուն ճանապարհի կառուցում,,	200.0																200.0
„Սիսիան համայնքի Կահան հորենի ճանապարհի անֆալտապատում,,	100.0																100.0

/Հազար դրամ/





Հավելված N1  
 ՀՀ ֆինանսների նախարարի  
 2013թ. օգոստոսի 6-ի N673 Ն հրամանի

Հավելված N 3  
 27 հունիսի 2014թ. կնքված  
 ՍՄ-ԲԸԱՀ-ԾՁԲ-14/04-1/1-1/3-1/4-1/6 պայմանագրի

**„Պատվիրատու,,**  
 ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
 աշխատակազմ  
 Հասցե՝ ք. Կապան Գ. Նժդեհ 1  
 ՀՀ ՖՆ Կենտրոնական  
 գանձապետարան  
 Հ/Հ 900312000038  
 ՀԿՀՀ 09415375

**„Կատարող,,**  
 „Ճաննախագիծ հնստիտուտ,,  
 ՍՊԸ  
 ք. Երևան, Աճառյան 54 ք  
 „Ջարգացման հայկական բանկ,, ՓԲԲ  
 Հ/Հ 1810052093643312  
 ՀԿՀՀ 00813453

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N\_\_**  
**Հ Ա Ն Ձ Ն Մ Ա Ն - Ը Ն Դ ՈՒ Ն Մ Ա Ն**

«\_\_\_» «\_\_\_\_\_» 2014թ.

Պայմանագրի անվանումը -

Պայմանագրի կնքման ամսաթիվը ---- 27 հունիսի 2014թ.

Պայմանագրի համարը --- ՍՄ-ԲԸԱՀ-ԾՁԲ-14/04-1/1-1/3-1/4-1/6

„Պատվիրատուն,, ի դեմս՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս. Աղաբեկյանի և „Կատարողը,, ի դեմս՝ „Ճաննախագիծ հնստիտուտ,, ՍՊԸ տնօրեն Ս. Բաղայանի հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները (այսուհետև աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին. կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին:

Պայմանագրի չրջանակներում „Կատարողը,, „\_\_\_\_\_, \_\_\_\_\_ 2014թ. ից մինչև „\_\_\_\_\_, \_\_\_\_\_

2014 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Կատարված աշխատանքների համառոտ նկարագրությունը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազ.դրամ/	Վճարման ժամկետը (րստ ժամանակացույցի)
1	2	3	4	5
<b>Ընդամենը</b>				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքները հանձնեց՝ Աշխատանքները ֆինանսավորեց Աշխատանքներն ընդունեց՝

Ս. Բաղայան

Ա. Համբարձումյան

Ս. Աղաբեկյան

(ստորագրություն)  
(ԱԱՀ)

(ԱԱՀ)

(ստորագրություն)